



Համարը N 53-Ն
Տիպը Հրաման
Սկզբնաղբյուրը Միասնական կայք 2023.11.13-
2023.11.26 Պաշտոնական
հրապարակման օրը 21.11.2023
Ընդունող մարմինը Առողջապահության նախարար
Ստորագրող մարմինը Առողջապահության նախարար
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 01.01.2027

Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 16.11.2023
Ստորագրման ամսաթիվը 16.11.2023
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

☐ Օանուցում

Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

☑ Կապեր այլ փաստաթղթերի հետ

☑ Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ՄԱՐԴՈՒ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՋՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» 2.1.4.001-23 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 876 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

16 նոյեմբեր 2023 թվականի

N 53-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

«ՄԱՐԴՈՒ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՋՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» 2.1.4.001-23 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 876 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածը՝

Հրամայում եմ՝

- Հաստատել՝ «Մարդու սպառման համար նախատեսված ջրի որակին ներկայացվող պահանջներ» 2.1.4.001-23 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները՝ համաձայն հավելվածի:
- Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի ««Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա 2-1 սանիտարական նորմերը և կանոնները հաստատելու մասին» թիվ 876 հրամանը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2027 թվականի հունվարի 1-ից:

Ա. Ավանեսյան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2023 թվականի նոյեմբերի «16»-ի
թիվ 53-Ն հրամանի

**«ՄԱՐԴՈՒ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԶՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ»
2.1.4.001-23 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՎ ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԱՏԻՎՆԵՐ**

ԳԼՈՒԽ 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏ

1. Սույն սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները (այսուհետ՝ Նորմեր) նախատեսված են պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, որոնց գործունեությունը կապված է խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործման և բնակչությանը՝ մաքուր խմելու և կենցաղային նպատակներով սպառման համար նախատեսված ջրով (այսուհետ՝ Խմելու ջուր) ապահովելու հետ:

2. Սույն Նորմերը սահմանում են Խմելու ջրի որակին և հսկողությանը ներկայացվող պահանջները և կիրառվում են մաքուր խմելու և կենցաղային նպատակներով սպառման (բացառությամբ շշացված և հանքային ջրերի), պարենային հումքի վերամշակման և սննդամթերքի արտադրության, պահպանման ու վաճառքի, ինչպես նաև Խմելու ջրի օգտագործում պահանջող այլ արտադրության համար նախատեսված ջրի նկատմամբ:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3. Խմելու ջրի որակը պետք է համապատասխանի սույն Նորմերի պահանջներին:

4. Եթե խմելու ջրամատակարարման համակարգում առաջանում են վթարային իրավիճակներ կամ տեխնիկական շեղումներ, որոնք բերում են կամ կարող են բերել Խմելու ջրի որակի կամ բնակչության խմելու ջրամատակարարման պայմանների վատթարացմանը, խմելու ջրամատակարարման համակարգի շահագործում իրականացնող կազմակերպությունը պարտավոր է անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ շեղումների վերացման ուղղությամբ և տեղեկացնել այդ մասին Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (այսուհետ՝ ԱՍՏՄ) տարածքային ստորաբաժանմանը: Խմելու ջրամատակարարման համակարգի շահագործում իրականացնող կազմակերպությունը պարտավոր է ԱՍՏՄ տարածքային ստորաբաժանման անհապաղ տեղյակ պահել Խմելու ջրի լաբորատոր հետազոտության արդյունքում սույն Նորմերին չհամապատասխանող յուրաքանչյուր նմուշի վերաբերյալ:

5. Խմելու ջրամատակարարման համակարգի նոր կառուցված և վերակառուցված ցանցերի շահագործումն իրականացվում է նոր կառուցված կամ վերակառուցված խողովակաշարի լվացման, ախտահանման և բնակչությանը մատակարարվող Խմելու ջրի նմուշի լաբորատոր հետազոտության արդյունքների հիման վրա՝ սույն Նորմերի պահանջներին համապատասխանության դեպքում:

6. Բնակչության կողմից Խմելու ջրի օգտագործումն ժամանակավոր դադարեցվում է, եթե չի ապահովվում բնակչությանը տրվող, սույն Նորմերի պահանջներին բավարարող Խմելու ջրի որակը և առկա է իրական վտանգ բնակչության առողջության համար: Խմելու ջրամատակարարման տվյալ համակարգից բնակչությանը տրվող Խմելու ջրի օգտագործումն ժամանակավոր դադարեցվում է ԱՍՏՄ ղեկավարի կողմից կայացրած որոշման հիման վրա:

7. Այն դեպքում, երբ ԱՍՏՄ ղեկավարի կողմից կայացվել է որոշում Խմելու ջրի օգտագործումը ժամանակավոր դադարեցնելու մասին, ապա խմելու ջրամատակարարման համակարգերի շահագործում իրականացնող կազմակերպությունները մշակում են Խմելու ջրի որակի վատթարացման պատճառների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված միջոցառումները և ներկայացնում ԱՍՏՄ տարածքային ստորաբաժանում:

8. Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպություններն ու ԱՍՏՄ-ն բնակչությանը տեղեկացնում են Խմելու ջրի մատակարարման դադարեցման որոշման, Խմելու ջրի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացման մասին, ինչպես նաև ներկայացվում են առաջարկություններ տվյալ իրավիճակում բնակչության կողմից իրականացվելիք միջոցառումների մասին:

ԳԼՈՒԽ 3. ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

9. Խմելու ջուրը պետք է լինի անվտանգ և համապատասխանի սույն Նորմերի Աղյուսակ 1-ից-5-ում սահմանված պահանջներին:

10. Ելնելով բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նկատառումներից՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը (այսուհետ՝ Լիազոր մարմին) կարող է սահմանել սույն Նորմերի Աղյուսակ 1-ից 5-ում չընդգրկված լրացուցիչ ցուցանիշներ:

11. Սույն Նորմերի Աղյուսակ 1-ում և Աղյուսակ 2-ում թվարկված ցուցանիշների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներն (այսուհետ՝ ՍԹԿ) ու նորմերը խմելու ջրամատակարարման համակարգի շահագործում իրականացնող կազմակերպության կողմից ապահովվում են ապառողների կողմից Խմելու ջրից օգտվելու համար նախատեսված ծորակներում (այսուհետ՝ Ծորակ):

Աղյուսակ 1

ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	Նորմ	Չափման միավոր
Աղիքային էնտերակոկ	0	քանակ/100 մլ
<i>Escherichia coli (E. coli)</i>	0	քանակ/100 մլ

Աղյուսակ 2

ՔԻՄԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	ՍԹԿ	Չափման միավոր	Նշումներ
Աղրիլամիդ	0,10	մկգ/դմ ³	0,10 մկգ/դմ ³ ՍԹԿ-ն վերաբերում է Խմելու ջրում մոնոմերի մնացորդային կոնցենտրացիային, որը հաշվարկվում է Խմելու ջրի հետ շփվող համապատասխան պոլիմերից առավելագույն արտանետման բնութագրերի համաձայն:
Ծարիր	10	մկգ/դմ ³	
Արսեն	10	մկգ/դմ ³	
Բենզոլ	1,0	մկգ/դմ ³	
Բենզոպրեն կամ Բենզալիբեն	0,010	մկգ/դմ ³	
Բիսֆենոլ A	2,5	մկգ/դմ ³	

Բոր	1,5	մգ/դմ ³	Այն դեպքում, երբ աղագերծված Խմելու ջուրը տվյալ Խմելու ջրամատակարարման համակարգի Խմելու ջրի գերակշռող աղբյուրն է կամ այն շրջաններում, որտեղ երկրաբանական պայմանները կարող են հանգեցնել ստորերկրյա ջրերում բորի պարունակության, պետք է կիրառվի Խմելու ջրում բորի պարունակության 2,4 մգ/դմ ³ ՍԹ-ն:
Բրոմատ	10	մկգ/դմ ³	
Կադմիում	5,0	մկգ/դմ ³	
Քլորատ	0,25	մգ/դմ ³	0,70 մգ/դմ ³ ՍԹ-ն կիրառվում է այն դեպքերում, երբ Խմելու ջրի վարակագրեման համար օգտագործվող ախտահանման մեթոդի կիրառման արդյունքում առաջանում է քլորատ, և հատկապես՝ քլորի երկօքսիդ: Ցուցանիշը հետազոտվում է միայն այն դեպքում, երբ կիրառվում են ախտահանման նմանատիպ մեթոդներ:
Քլորիտ	0,25	մգ/դմ ³	0,70 մգ/դմ ³ ՍԹ-ն կիրառվում է այն դեպքերում, երբ Խմելու ջրի վարակագրեման համար օգտագործվող ախտահանման մեթոդի կիրառման արդյունքում առաջանում է քլորատ, և հատկապես՝ քլորի երկօքսիդ: Ցուցանիշը հետազոտվում է միայն այն դեպքում, երբ կիրառվում են ախտահանման նմանատիպ մեթոդներ:
Քրոմ	25	մկգ/դմ ³	25 մկգ/դմ ³ ՍԹ-ին պետք է հասնել ամենաուշը մինչև 2036 թվականի հունվարի 12-ը: Մինչև այդ ամսաթիվը քրոմի ՍԹ-ն պետք է լինի 50 մկգ/դմ ³ :
Պղինձ	2,0	մգ/դմ ³	
Ցիանիդ	50	մկգ/դմ ³	
1,2 դիքլորեթան	3,0	մկգ/դմ ³	
Էպիքլորոհիդրին	0,10	մկգ/դմ ³	0,10 մկգ/դմ ³ ՍԹ-ն վերաբերում է Խմելու ջրի մեջ մոնոմերի մնացորդային կոնցենտրացիային, որը հաշվարկվում է Խմելու ջրի հետ շփվելիս համապատասխան պոլիմերից առավելագույն արտանետման բնութագրերի համաձայն:
Ֆտորիդ	1,5	մգ/դմ ³	
Հալոքացախաթթուներ (HAAs)	60	մկգ/դմ ³	Այս ցուցանիշը հետազոտվում է միայն այն դեպքում, երբ Խմելու ջրի ախտահանման համար կիրառվող մեթոդը կարող է առաջացնել/զենեացնել հալոքացախաթթուներ (HAAs): ՍԹ-ն վերաբերում է այդ խմբի հետևյալ հինգ ներկայացուցչական նյութերի գումարին՝ մոնոքլոր-, երկքլոր- և տրիքլոր-քացախաթթու և մոնո- և երկբրոմ-քացախաթթու:

Կապար	5	մկգ/դմ ³	5 մկգ/դմ ³ ՍԹԿ-ին պետք է հասնել ամենաուշը մինչև 2036 թվականի հունվարի 12-ը: Մինչ այդ ամսաթիվը կապարի ՍԹԿ-ն չպետք է գերազանցի ≤ 10 մկգ/դմ ³ :
Սնդիկ	1,0	մկգ/դմ ³	
Նիկել	20	մկգ/դմ ³	
Նիտրատ	50	մգ/դմ ³	Պահպանվում են $[\text{նիտրատ}]/50 + [\text{նիտրիտ}]/3 \leq 1$ պայմանները, որտեղ քառակուսի փակագծերը Խմելու ջրում նիտրատի (NO_3) և նիտրիտի (NO_2) պարունակությունների կոնցենտրացիաներն են մգ/դմ ³ -ով, և որ ջրի մշակման աշխատանքներից հետո նիտրիտի կոնցենտրացիաները համապատասխանում են 0,10 մգ/դմ ³ ՍԹԿ-ին:
Նիտրիտ	0,50	մգ/դմ ³	Պահպանվում են $[\text{նիտրատ}]/50 + [\text{նիտրիտ}]/3 \leq 1$ պայմանները, որտեղ քառակուսի փակագծերը Խմելու ջրում նիտրատի (NO_3) և նիտրիտի (NO_2) պարունակությունների կոնցենտրացիաներն են մգ/դմ ³ -ով, և որ ջրի մշակման աշխատանքներից հետո նիտրիտի կոնցենտրացիաները համապատասխանում են 0,10 մգ/դմ ³ ՍԹԿ-ին:
Թունաքիմիկատներ	0,10	մկգ/դմ ³	«Թունաքիմիկատներ» նշանակում է. օրգանական ինսեկտիցիդներ, օրգանական հերբիցիդներ, օրգանական ֆունգիցիդներ, օրգանական նեմատոցիդներ, օրգանական ակարիցիդներ, օրգանական ալգիցիդներ, օրգանական ռոդենտիցիդ, օրգանական պիլիցիդներ, հարակից արտադրանքներ (այդ թվում՝ աճի կարգավորիչներ), և դրանց մետաբոլիտները, Յուրաքանչյուր առանձին թունաքիմիկատի նկատմամբ կիրառվում է 0,10 մկգ/դմ ³ ցուցանիշային արժեքը: Ալդրինի, դիելդրինի, հեպտաքլորի և հեպտաքլորի էպօքսիդի դեպքում ցուցանիշային արժեքը պետք է լինի 0,030 մկգ/դմ ³ : Պետք է մոնիթորինգի ենթարկվեն միայն այն թունաքիմիկատները, որոնք, ամենայն հավանականությամբ կարող են առկա լինել խմելու ջրամատակարարման տվյալ համակարգում:
Ընդհանուր թունաքիմիկատներ	0,50	մկգ/դմ ³	«Ընդհանուր թունաքիմիկատներ» նշանակում է նախորդ տողում նշված բոլոր առանձին թունաքիմիկատների գումարը, որը հայտնաբերված և քանակապես գնահատված է մոնիթորինգի ընթացակարգով:
Ընդհանուր PFAS	0,50	մկգ/դմ ³	«Ընդհանուր PFAS» նշանակում է պեր- և պոլիֆտորալկիլ նյութերի ընդհանրություն: Այս ցուցանիշային արժեքը կիրառվում է միայն այն ժամանակ, երբ կմշակվեն այս ցուցանիշի մոնիթորինգի անցկացման տեխնիկական և մեթոդական ուղեցույցները: Այնուհետև կարելի է օգտագործել «ԸնդհանուրPFAS» կամ «Գումարային PFAS» ցուցանիշները:

Գումարային PFAS	0,10	մկգ/դմ ³	«Գումարային PFAS» նշանակում է այն պեր- և պոլիֆտորալկիլային նյութերի գումարը, որոնց ատկայությունը մտահոգիչ է Խմելու ջրի համար: Սա «PFAS Total» նյութերի ենթաբազմություն է, որը պարունակվում է պերֆտորալկիլային ցուցանիշի մեջ՝ երեք կամ ավելի ածխածիններով (այսինքն՝ –CnF2n–, n ≥ 3) կամ երկու կամ ավելի ածխածիններով պերֆտորալկիլթերային մաս (այսինքն՝ –CnF2nOCmF2m–, n և m ≥ 1)
Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ	0,10	մկգ/դմ ³	ՍԹԿ-ն իրենից ներկայացնում է նշված միացությունների կոնցենտրացիաների գումարը՝ բենզո(b)ֆտորանթեն, բենզո(k)ֆտորանտեն, բենզո(g,h,i)պերիլեն և ինդենո(1,2,3-cd)պիրեն:
Սելեն	20	մկգ/դմ ³	Բացի այդ ցուցանիշի 30 մկգ/դմ ³ ՍԹԿ-ն պետք է կիրառվի այն տարածաշրջանների համար, որտեղ երկրաբանական պայմանները կարող են հանգեցնել ստորերկրյա ջրերում սելենի բարձր մակարդակի:
Տետրաքլորէթիլեն և տրիքլորէթիլեն	10	մկգ/դմ ³	Այս երկու ցուցանիշների ՍԹԿ-ների գումարն է:
Տրիհալոմեթաններ՝ ընդհանուր	100	մկգ/դմ ³	Սա հետևյալ նշված միացությունների՝ քլորոֆորմ, բրոմոֆորմ, երկբրոմոքլորմեթան և բրոմոդիքլորմեթան, ՍԹԿ-ների գումարն է:
Ուրան	30	մկգ/դմ ³	
Վինիլքլորիդ	0,50	մկգ/դմ ³	Ցուցանիշի 0.50 մկգ/դմ ³ ՍԹԿ-ն վերաբերում է Խմելու ջրում մոնոմերի մնացորդային կոնցենտրացիային, որը հաշվարկվում է Խմելու ջրի հետ շփվող համապատասխան պոլիմերից առավելագույն արտանետման բնութագրերի համաձայն:

Աղյուսակ 5

ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	Նորմ	Չափման միավոր
Ընդհանուր α- ռադիոակտիվություն	0.1	Բկ/լ
Ընդհանուր β- ռադիոակտիվություն	1.0	Բկ/լ

ԳԼՈՒԽ 4. ՌԻՍԿԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

12. Խմելու ջրամատակարարումն իրականացվում է ռիսկի վրա հիմնված մոտեցմամբ, ընդգրկելով խմելու ջրամատակարարման ամբողջ շղթան (ջրհավաք ավազան, ջրառ, մշակում, կուտակում, բաշխում և Ծորակ):
13. Ռիսկի վրա հիմնված մոտեցումը ներառում է.
- 1) Խմելու ջրի ջրհավաք ավազանի մոնիթորինգ, որը իրականացվում է ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից,
 - 2) խմելու ջրամատակարարման համակարգերում ռիսկերի գնահատում և կառավարում,
 - 3) ներքին բաշխման համակարգերում ռիսկերի գնահատում:

ԳԼՈՒԽ 5. ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

14. Խմելու ջրամատակարարման համակարգում ռիսկերի գնահատումը և կառավարումն իրականացվում է խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից և ընդգրկում է.

- 1) ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից իրականացված Խմելու ջրի ջրհավաք ավազանի մոնիթորինգի արդյունքները,
- 2) խմելու ջրամատակարարման, մասնավորապես՝ Խմելու ջրի ջրառի, մշակման, կուտակման և բաշխման կետերից մինչև Ծորակ, համակարգի նկարագրման արդյունքները,
- 3) խմելու ջրամատակարարման համակարգում առկա վտանգների և դրանցով պայմանավորված բնակչության առողջության համար առաջացող ռիսկերի գնահատումը՝ հաշվի առնելով կլիմայի փոփոխության և խմելու ջրամատակարարման համակարգից Խմելու ջրի արտահոսքի հետ կապված ռիսկերը:

15. Խմելու ջրամատակարարման համակարգում ռիսկերի գնահատման արդյունքում, ըստ անհրաժեշտության, խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից ապահովվում են ռիսկերի կառավարման հետևյալ միջոցառումները.

- 1) խմելու ջրամատակարարման համակարգում հայտնաբերված ռիսկերի կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումների սահմանում և իրականացում,
- 2) միջոցառումների սահմանում և իրականացում՝ ի լրումն ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից իրականացված Խմելու ջրի ջրհավաք ավազանի մոնիթորինգի արդյունքների,
- 3) Խմելու ջրի որակի հսկողության լրացուցիչ լաբորատոր հետազոտությունների իրականացում,
- 4) խմելու ջրամատակարարման համակարգի ախտահանում և (կամ) Խմելու ջրի վարակազերծում,
- 5) ջրամաքրման և ջրապատրաստման համար օգտագործվող նյութերի, ռեագենտների, սարքավորումների Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1009-Ն որոշման Հավելված N 10-ին համապատասխանության գնահատում:

16. Խմելու ջրամատակարարման համակարգում ռիսկերի գնահատման և կառավարման վերաբերյալ տեղեկատվությունը խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից ներկայացվում է Լիազոր մարմին:

17. Խմելու ջրամատակարարման համակարգում ռիսկերի գնահատման արդյունքների հիման վրա Լիազոր մարմինը. 1) կարող է թույլատրել ցուցանիշի նկատմամբ իրականացվող մոնիթորինգի հաճախականության նվազեցում (կամ) մոնիթորինգի ենթակա ցուցանիշներում փոփոխություններ (բացառությամբ 2և 2-ում թվարկված ցուցանիշների), հիմք ընդունելով.

- ա. չմշակված Խմելու ջրում ցուցանիշի առկայությունը՝ համաձայն ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից իրականացված Խմելու ջրի ջրհավաք ավազանի մոնիթորինգի արդյունքների,
- բ. Խմելու ջրում ցուցանիշի ի հայտ գալը միայն մշակման կամ վարակազերծման որոշակի (խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից չկիրառվող) մեթոդի կիրառման արդյունքում,

- գ. սույն Նորմերի 2և 1-ով սահմանված բնութագրերը,
 - 2) կարող է ընդլայնել Գլուխ 8-ով սահմանված մոնիթորինգի ենթակա ցուցանիշների ցանկը և (կամ) ավելացնել ցուցանիշի նկատմամբ իրականացվող մոնիթորինգի հաճախականությունը, հիմք ընդունելով.
 - ա. չմշակված Խմելու ջրում ցուցանիշի առկայությունը՝ համաձայն ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից իրականացված Խմելու ջրի ջրհավաք ավազանի մոնիթորինգի արդյունքների,
 - բ. 2և 1-ով սահմանված բնութագրերը:
18. Խմելու ջրամատակարարման համակարգում ռիսկերի գնահատման ու կառավարման համար հիմք են հանդիսանում սույն Նորմերի Աղյուսակ 1-ից 3-ում թվարկված պահանջները:

Աղյուսակ 3

ՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	ՍԹԿ	Չափման միավոր	Նշումներ
Ալյումինում	200	մկգ/դմ ³	

Ամոնիում իոն	0,50	մգ/դմ ³	
Քլորիդներ	250	մգ/դմ ³	Ջուրը չպետք է լինի քայքայիչ:
Clostridium perfringens, ներառյալ՝ սպորները	0	քանակ/100 մլ	Այս ցուցանիշը հետազոտվում է, եթե ռիսկի գնահատումը ցույց է տալիս, որ դա նպատակահարմար է:
Գույն	Ընդունելի է սպառողների համար և չկա անսովոր փոփոխություն, ≤ 35	աստիճան	
Էլեկտատրահաղորդականություն	2 500	$\mu S \text{ cm}^{-1}$ ` 20 °C պայմաններում	
Ջրածնի իոնի կոնցենտրացիա	$\geq 6,5$ և $\leq 9,5$	pH միավորներ	
Երկաթ	200	մկգ/դմ ³	
Մանգան	50	մկգ/դմ ³	
Հոտ	Ընդունելի է սպառողների համար և չկա անսովոր փոփոխություն, ≤ 2	բալ	
Պերմանգանատային օքսիդացում	5,0	մգ/դմ ³ O2	Այս ցուցանիշը պետք չէ հետազոտել, եթե վերլուծվում է TOC ցուցանիշը:
Սուլֆատներ	250	մգ/դմ ³	Ջուրը չպետք է լինի քայքայիչ:
Նատրիում	200	մգ/դմ ³	
Համ	Ընդունելի է սպառողների համար և չկա անսովոր փոփոխություն, ≤ 2	բալ	
Գաղութների հաշվարկ 22 °C պայմաններում	Առանց անսովոր փոփոխության		
Կոլիձև մանրէներ	0	քանակ/100 մլ	

Ընդհանուր օրգանական ածխածին (TOC)	Առանց անսովոր փոփոխություն		
Պղտորություն	Ընդունելի է սպառողների համար և չկա անսովոր փոփոխություն, ≤ 2.6 կամ ≤ 1.5	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կառլինի)	

ԳԼՈՒԽ 6. ՆԵՐՔԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

19. Ներքին բաշխման համակարգերում ռիսկերի գնահատումն իրականացվում է խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից:
20. Ներքին բաշխման համակարգերում ռիսկերի գնահատումն ընդգրկում է ներքին բաշխման համակարգերով պայմանավորված խմելու ջրի որակի և (կամ) մարդու առողջության համար հնարավոր ռիսկերի ընդհանուր վերլուծությունը և վերլուծության արդյունքում հայտնաբերված ռիսկերի դեպքում՝ սույն Նորմերի Աղյուսակ 4-ում թվարկված ցուցանիշների նկատմամբ մոնիթորինգի իրականացումը:

Աղյուսակ 4

ՆԵՐՔԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշ	ՄԹԿ / Նորմ	Չափման միավոր
Կապար	10	մկգ/դմ ³
Լեզիոնելլա	< 1 000	ԳԱՄ/դմ ³

21. Ներքին բաշխման համակարգերում ռիսկերի գնահատման արդյունքում, ըստ անհրաժեշտության, ներքին բաշխման հետ կապված ռիսկերը նվազեցնելու նպատակով խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունը.
- 1) ներքին բաշխման համակարգերով պայմանավորված խմելու ջրի որակի և (կամ) մարդու առողջության համար հնարավոր ռիսկերի, և այդ ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների մասին տեղեկացնում է սպառողներին,
- 2) արձանագրված ռիսկերի դեպքում խմելու ջրի սպառման և օգտագործման պայմանների, ինչպես նաև այդ ռիսկերի կրկնությունը կանխելուն ուղղված միջոցառումների մասին տեղեկացնում է սպառողներին:
22. Ներքին բաշխման համակարգերով պայմանավորված խմելու ջրի որակի և (կամ) մարդու առողջության համար հնարավոր ռիսկերի ի հայտ գալու և (կամ) սույն Նորմերի Աղյուսակ 4-ում թվարկված ցուցանիշների նկատմամբ իրականացված մոնիթորինգի արդյունքում անհամապատասխանությունների արձանագրման դեպքում՝ խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունն ի հայտ եկած ռիսկերի, արձանագրված անհամապատասխանությունների և իր կողմից ձեռնարկված համապատասխան կանխարգելիչ միջոցառումների մասին անմիջապես տեղեկացնում է Լիազոր մարմինին և ԱԱՏՄ-ին:
23. Ջրամաքրման և ջրապատրաստման համար օգտագործվող նյութերին, ռեագենտներին, սարքավորումներին ներկայացվող պահանջները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի թիվ 1009-Ն որոշման Հավելված N 10-ով:

ԳԼՈՒԽ 7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

24. Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից իրականացվում է Խմելու

զրի որակի կանոնավոր մոնիթորինգ (արտադրական հսկողություն)՝ համաձայն սույն Գլխի և Ձև 2-ի:

25. Կանոնավոր մոնիթորինգ (արտադրական հսկողություն) իրականացնելու նպատակով խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից կազմվում է մոնիթորինգի ծրագիր յուրաքանչյուր բնակավայրին մատակարարվող խմելու ջրամատակարարման համակարգի համար, որն ընդգրկում է.

- 1) սույն Նորմերի Աղյուսակ 1-ից 3-ում թվարկված ցուցանիշների մոնիթորինգ,
- 2) Լիազոր մարմնի կողմից սահմանված լրացուցիչ ցուցանիշների մոնիթորինգ,
- 3) շարունակական մոնիթորինգի ընթացքում գրանցված չափումների արդյունքները,
- 4) սույն Նորմերի Աղյուսակ 4-ում թվարկված ցուցանիշների մոնիթորինգ՝ սույն Նորմերի 19-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետով սահմանված պահանջի բավարարման դեպքում,
- 5) խմելու ջրամատակարարման համակարգում, ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմնի կողմից իրականացված Խմելու ջրի ջրհավաք ավազանի մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված նյութերի և միացությունների մոնիթորինգ,

6) գործառնական մոնիթորինգ, համաձայն Ձև 3-ի:

26. Խմելու ջրի նմուշառման մեթոդները և կետերը պետք է համապատասխանեն Ձև 4-ով սահմանված պահանջներին:

27. Խմելու ջրի նմուշների լաբորատոր հետազոտություններն իրականացվում են Ձև 5-ում թվարկված մեթոդների կամ այլ համարժեք մեթոդների կիրառմամբ:

28. Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունն իրականացնում է մոնիթորինգի ծրագրում չընդգրկված ցուցանիշների, նյութերի և միացությունների լրացուցիչ մոնիթորինգ՝ այդ նյութերի և միացությունների մարդու առողջության համար ռիսկի գործոն հանդիսանալու բավարար հիմնավորվածության դեպքում:

ԳԼՈՒԽ 8. ՆՈՐՄԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ ՇԵՂՈՒՄՆԵՐ

29. Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից պատշաճ կերպով հիմնավորված հանգամանքներում և բացառելով բնակչության առողջության վրա հավանական ռիսկը՝ Լիազոր մարմնի թույլտվությամբ՝ խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունները կարող են թույլ տալ շեղումներ Սույն Նորմերի Աղյուսակ 2-ում թվարկված ցուցանիշների ՍԹ-ից՝ մինչև դրանց առավելագույն կոնցենտրացիան: Շեղումները բնորոշվում են հետևյալով.

- 1) Խմելու ջրի նոր ջրհավաք ավազանի առկայություն,
- 2) Խմելու ջրի ջրհավաք ավազանում աղտոտման նոր աղբյուրի և (կամ) նոր ցուցանիշների առկայություն,
- 3) գոյություն ունեցող ջրհավաք ավազանում Խմելու ջրի ջրառի համար չնախատեսված և բացառիկ իրավիճակի առկայություն, որը կարող է հանգեցնել ՍԹ-ի ժամանակավոր գերազանցումների,
- 4) տևողությամբ չեն գերազանցում երեք տարին:

30. Սույն Նորմերի 29-րդ կետով նախատեսված պահանջների կրկնվելու դեպքում և բացառելով բնակչության առողջության վրա հավանական ռիսկը՝ Լիազոր մարմինը կարող է թույլ տալ շեղման տևողությունը երկարաձգել ևս երեք տարով:

31. Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից ներկայացվող հիմնավորվածությունը ընդգրկում է.

- 1) շեղման հիմքերը,
- 2) խնդրահարույց ցուցանիշները, նախորդ համապատասխան մոնիթորինգի արդյունքները և շեղման դեպքում ցուցանիշի առավելագույն արձանագրված արժեքը,
- 3) աշխարհագրական տարածքը, ամեն օր մատակարարվող Խմելու ջրի քանակը, և Խմելու ջրամատակարարման տվյալ համակարգից օգտվող բնակչության թվաքանակը,
- 4) մոնիթորինգի ծրագիրը անհրաժեշտության դեպքում կոնկրետ ցուցանիշների նկատմամբ ավելացված հաճախականությամբ,
- 5) անհրաժեշտ կանխարգելիչ և մեղմիչ գործողությունների ծրագիրը, ներառյալ՝ աշխատանքների ժամանակացույցը,
- 6) շեղումների տևողությունը:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՆՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

32. Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունները, առնվազն տարին մեկ անգամ, առցանց եղանակով, ապահովում են Խմելու ջրի վերաբերյալ ճշգրիտ և արդիական տեղեկատվության հասանելիությունը:

33. Հանրությանը տրամադրվող տեղեկատվությունը ներառում է տվյալներ.

- 1) խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության, խմելու ջրամատակարարման տվյալ համակարգից օգտվող բնակչության թվաքանակի, ինչպես նաև Խմելու ջրի արտադրության, այդ թվում՝ Խմելու ջրի մշակման և վարակազերծման վերաբերյալ,

- 2) խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից Սույն Նորմերի Աղյուսակ 1-ից 3-ում թվարկված ցուցանիշների, կալցիումի, մագնեզիումի և կալիումի մոնիթորինգի արդյունքների, այդ թվում՝ դրանց ՍԹԿ-ների/տրմանների վերաբերյալ,
 - 3) կոշտության, Խմելու ջրում լուծված հանքանյութերի և անիոնների ու կատիոնների վերաբերյալ,
 - 4) խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպության կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների, Խմելու ջրի որակի և (կամ) մարդու առողջության համար հնարավոր ռիսկերի, և ձեռնարկված համապատասխան կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ,
 - 5) խմելու ջրամատակարարման համակարգերի ռիսկերի գնահատման և կառավարման վերաբերյալ:
34. Օրական առնվազն 10000 մ³ խմելու ջուր մատակարարող կամ առնվազն 50000 մարդու սպասարկող Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունները, տարեկան պարբերականությամբ, ներկայացնում են նաև տեղեկատվություն ստորև նշվածների վերաբերյալ.
- 1) խմելու ջրամատակարարման համակարգի աշխատանքի և վերջինիս արդյունավետության, ինչպես նաև խմելու ջրամատակարարման համակարգից Խմելու ջրի արտահոսքի մասին,
 - 2) խմելու ջրամատակարարման համակարգի պատկանելիության,
 - 3) Խմելու ջրի մեկ լիտրի և մեկ մետր խորանարդի սակագնի վերաբերյալ,
 - 4) բնակչության կողմից ներկայացված բողոքների վերաբերյալ տեղեկատվություն:

Ձև 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

1. Մոնիթորինգի ենթակա ցուցանիշների ցանկն ընդլայնվում է, իսկ Ձև 2-ում սահմանված նմուշառման հաճախականություններն ավելացվում են, եթե Ձև 2-ով սահմանված մոնիթորինգի ենթակա ցուցանիշների ցանկը կամ նմուշառման հաճախականությունները բավարար չեն սույն Նորմերի պահանջներն ապահովելու համար:
2. Մոնիթորինգի ենթակա ցուցանիշների ցանկը կրճատվում է, իսկ Ձև 2-ում սահմանված նմուշառման հաճախականություններն պակասեցվում են, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները.
 - 1) նմուշառման վայրը և հաճախականությունը որոշվում են ցուցանիշի ծագմամբ, ինչպես նաև դրա կոնցենտրացիայի փոփոխությամբ,
 - 2) ցուցանիշի նմուշառման հաճախականությունը կրճատվում է, եթե ամբողջ խմելու ջրամատակարարման գոտու համար ընտրված նմուշառման կետերից առնվազն երեք տարվա ընթացքում՝ կանոնավոր հաճախականությամբ, նմուշառված նմուշներից ստացված բոլոր արդյունքները ՍԹԿ-ների/տրմանների 60%-ից փոքր են,
 - 3) մոնիթորինգի ենթակա ցուցանիշների ցանկից որևէ ցուցանիշ հանվում է, եթե ամբողջ խմելու ջրամատակարարման գոտու համար ընտրված նմուշառման կետերից առնվազն երեք տարվա ընթացքում՝ կանոնավոր հաճախականությամբ, նմուշառված նմուշներից ստացված բոլոր արդյունքները ՍԹԿ-ների/տրմանների 30%-ից փոքր են,
 - 4) մոնիթորինգի ենթակա ցուցանիշների ցանկից որևէ ցուցանիշի հանման համար հիմք է ընդունվում նաև ռիսկերի գնահատման արդյունքները:

Ձև 2

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՆՍՈՒՇԱՌՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ցուցանիշներ.
 - 1) խումբ «Ա»-ն ընդգրկում է հետևյալ ցուցանիշները.
 - ա. *Escherichia coli* (E. coli), աղիքային էնտերոկոկներ, կոլիձև մանրէներ, գաղութներ առաջացնող մանրէների քանակ 22°C պայմաններում, գույն, պոտորություն, համ, հոտ, ջրածնի իոնի կոնցենտրացիա և էլեկտատրահաղորդականություն,
 - բ. անհրաժեշտության դեպքում այլ ցուցանիշներ, որոնք սահմանվում են Նորմերի 11-րդ կետով և 17-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով, և Ձև 1-ով,
 - 2) խումբ «Ա» ցուցանիշների մոնիթորինգն իրականացվում է Ձև 2-ի 2-րդ կետի համաձայն,
 - 3) հատուկ հանգամանքներում Խումբ «Ա» ցուցանիշներին ավելացվում են հետևյալ ցուցանիշները.
 - ա. ամոնիում և նիտրիտ, եթե օգտագործվում է քլորացում ամոնիօզացիայով,
 - բ. ալյումին և երկաթ, երբ վերջիններս օգտագործվում են որպես Խմելու ջրի մշակման քիմիական նյութեր,
 - 4) խումբ «Ա»-ում ընդգրկված «*Escherichia coli* (E. coli)», «աղիքային էնտերոկոկներ» ցուցանիշները հանդիսանում են «հիմնական ցուցանիշներ», և դրանց մշտադիտարկման հաճախականությունը չպետք է նվազեցվի և դրանք պետք է մշտադիտարկվեն Ձև 2-ի 2-րդ կետի համաձայն,
 - 5) խումբ «Բ».
- Նորմերով սահմանված բոլոր ցուցանիշների համապատասխանությունը որոշելու համար Խումբ «Ա»-ում չներառված և Նորմերի 10-րդ և 11-րդ կետերով սահմանված բոլոր ցուցանիշների, բացառությամբ Սույն Նորմերի Աղյուսակ 4-ով

սահմանված ցուցանիշների, մոնիթորինգն իրականացվում է Ձև 2-ի 2-րդ կետի համաձայն, եթե Նորմերի 5-րդ Գլխով կամ 17-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով այլ հաճախականություն որոշված չէ:

2. Նմուշառման հաճախականություն.

Համապատասխանության մոնիթորինգի համար նմուշառման և հետազոտման նվազագույն հաճախականությունը

Ջրամատակարարման գոտում ամեն օր բաշխվող կամ արտադրվող Խմելու ջրի ծավալ (տե՛ս Ծանոթագրություններ 1 և 2) մ ³		Խումբ «Ա» ցուցանիշների նմուշների տարեկան քանակ	Խումբ «Բ» ցուցանիշների նմուշների տարեկան քանակ
	< 10	1	1
≥ 10	≤ 100	2	1
> 100	≤ 1 000	4	1
> 1 000	≤ 10 000	4՝ առաջին 1000 մ ³ /օր ծավալի համար + 3՝ յուրաքանչյուր հավելյալ 1000 մ ³ /օր ծավալի և դրա ընդհանուր ծավալի մի մասի համար (տե՛ս Ծանոթագրություն 3)	1՝ առաջին 1000 մ ³ /օր ծավալի համար + 1՝ յուրաքանչյուր հավելյալ 4500 մ ³ /օր ծավալի և դրա ընդհանուր ծավալի մի մասի համար (տե՛ս Ծանոթագրություն 3)
> 10 000	≤ 100 000		3՝ առաջին 10000 մ ³ /օր ծավալի համար + 1՝ յուրաքանչյուր հավելյալ 10000 մ ³ /օր ծավալի և դրա ընդհանուր ծավալի մի մասի համար (տե՛ս Ծանոթագրություն 3)
> 100 000			12՝ առաջին 100000 մ ³ /օր ծավալի համար + 1՝ յուրաքանչյուր հավելյալ 25000 մ ³ /օր ծավալի և դրա ընդհանուր ծավալի մի մասի համար (տե՛ս Ծանոթագրություն 3)

Ծանոթագրություն 1՝ Ջրամատակարարման գոտին աշխարհագրորեն սահմանված տարածք է, որի ներսում Խմելու ջուրը ստացվում է մեկ կամ մի քանի աղբյուրից, և որի ներսում Խմելու ջրի որակը կարելի է համարել միատեսակ:

Ծանոթագրություն 2՝ Ծավալը հաշվարկվում է որպես օրացուցային տարվա համար վերցված միջին արժեք: Նվազագույն հաճախականությունը որոշելու համար Խմելու ջրի ծավալի փոխարեն կարող է կիրառվել ջրամատակարարման գոտուց օգտվող բնակչության թիվը՝ ենթադրելով, որ 1 բնակչի կողմից օրվա ջրածախսը կազմում է 200 լիտր:

Ծանոթագրություն 3՝ Նշված հաճախականությունը հաշվարկվում է հետևյալ կերպ.

Օրինակ՝ 4 300 մ³/օր = 16 նմուշ Խումբ «Ա»-ի ցուցանիշների համար (4 նմուշ՝ առաջին 1000 մ³/օր ծավալի համար + 12 լրացուցիչ նմուշ՝ 3300 մ³/օր ծավալի համար):

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

1. Գործառնական մոնիթորինգ իրականացվում է յուրաքանչյուր խմելու ջրամատակարարման համակարգի համար՝ հաշվի առնելով խմելու ջրամատակարարման համակարգի ռիսկերի գնահատման արդյունքները:
2. Գործառնական մոնիթորինգի ներառում է «պղտորություն ջրամատակարարման կայանում» ցուցանիշի մոնիթորինգը՝ ֆիլտրման գործընթացներով ֆիզիկական հեռացման արդյունավետությունը կանոնավոր կերպով ստուգելու համար՝ համաձայն ստորև բերվող Աղյուսակում 6-ում նշված ՍԹԿ-ի և Աղյուսակում 7-ում նշված հաճախականությունների (կիրառելի չէ ստորերկրյա ջրաղբյուրների համար, որտեղ պղտորությունը պայմանավորված է երկաթով և մանգանով):

Աղյուսակ 6

Գործառնական ցուցանիշ	ՍԹԿ
Պղտորությունը ջրամատակարարման կայանում	0.3 NTU նմուշների 95%-ում և ոչ մի նմուշում չպետք է գերազանցի 1 NTU-ն

Աղյուսակ 7

Ջրամատակարարման գոտում ամեն օր բաշխվող կամ արտադրվող Խմելու ջրի ծավալը (մ ³)	Նմուշառման և հետազոտության նվազագույն հաճախականությունը
≤ 1 000	Շաբաթական
> 1 000 ≤ 10 000	Օրական
> 10 000	Շաբունական

3. Գործառնական մոնիթորինգի ծրագիրը ներառում է նաև չմշակված ջրում հետևյալ ցուցանիշների մոնիթորինգը՝ մանրէաբանական աղտոտվածության կանխարգելմանն ուղղված վարակազերծման գործընթացների արդյունավետությունը գնահատելու համար.

Գործառնական ցուցանիշ	Նորմ	Չափման միավոր	Նշումներ
Սոմատիկ կոլիֆագեր	50 (չմշակված ջրի համար)	Վահանակ առաջացնող միավորներ ՎԱՄ/100 մլ	Այս ցուցանիշը հետազոտվում է, եթե ռիսկի գնահատումը ցույց է տալիս, որ դա նպատակահարմար է: Եթե չմշակված ջրում այս ցուցանիշի քանակը բարձր է 50 ՎԱՄ/100 մլ-ից, այն պետք է ստուգվի մշակման ցիկլի փուլերից հետո՝ որոշելու տեղադրված խոչընդոտների միջոցով նյութի հեռացումը և գնահատելու, թե արդյոք ախտածին վիրուսների ներթափանցման վտանգը բավականաչափ վերահսկվում է:

4. Խմելու ջրամատակարարման համակարգը շահագործող կազմակերպությունն առնվազն վեց տարին մեկ անգամ վերանայում և վերահաստատում է Խմելու ջրի մոնիթորինգի ծրագիրը:

ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՆՄՈՒՇԱՌՄԱՆ ԿԵՏԵՐ

1. Խմելու ջրի նմուշառումն իրականացվում է խմելու ջրամատակարարման համակարգում և Ծորակում:
2. Ծորակում նմուշառումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.
 - 1) որոշակի քիմիական ցուցանիշների, մասնավորապես՝ պղնձի, կապարի և նիկելի հետազոտման նպատակով նմուշները վերցվում են Ծորակից՝ առանց Խմելու ջրի նախնական բացթողման: Վերցվում է 1դմ³ ծավալով նմուշ՝ ցերեկային պատահական ժամի,
 - 2) Ծորակում մանրէաբանական ցուցանիշների հետազոտման նպատակով՝ նմուշները վերցվում և մշակվում են համաձայն՝ EN ISO 19458-ի:
 3. Ներքին բաշխիչ համակարգերում Լեգիոնելլայի հայտնաբերման նպատակով նմուշները վերցվում են Լեգիոնելլայի տարածման համար ռիսկային համարվող կետերում:
 4. Բաշխիչ ցանցում նմուշառումը, բացառությամբ Ծորակից նմուշառման, իրականացվում է ԻՍՕ 5667-1(ԳՕՍՏ 59024-2020), ԻՍՕ 5667-3(ԳՕՍՏ 59024-2020) ISO 5667-5(ԳՕՍՏ 31862-2012) ստանդարտների համաձայն: Բաշխման ցանցում մանրէաբանական ցուցանիշների հետազոտման համար նմուշները վերցվում և մշակվում են համաձայն՝ EN ISO 19458-ի:

Ձև 5

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏԿՈՐՈՇՈՒՄՆԵՐ

1. Հետազոտության մեթոդները, որոնք կիրառվում են մոնիթորինգի և Խմելու ջրի սույն Նորմերի հետ համապատասխանությունը գնահատելու համար, բացառությամբ պղտորության, հաստատված և փաստաթղթավորված են՝ համաձայն ՀՍ ՀՍՕ/ԻԵԿ 17025 կամ միջազգային մակարդակով ընդունված այլ համարժեք ստանդարտների: Լաբորատորիաները կամ այդ լաբորատորիաների հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ենթակապալառու այլ լաբորատորիաների կիրառում են որակի կառավարման համակարգի գործելակարգերը՝ համաձայն EN ISO/IEC 17025-ի կամ միջազգային մակարդակով ընդունված այլ համարժեք ստանդարտների:
2. Այլընտրանքային մեթոդների՝ սույն Ձև-ում սահմանված մեթոդների հետ համապատասխանությունը գնահատելու նպատակով, կարող է կիրառվել EN ISO 17994 ստանդարտը, որը հաստատվել է որպես մանրէաբանական մեթոդների համարժեքության գնահատման ստանդարտ, կամ՝ EN ISO 16140 ստանդարտը, կամ այլ՝ միջազգայնորեն ընդունված նմանատիպ ընթացակարգեր՝ հաստատելու կուլտուրային մեթոդից բացի այլ մեթոդների համարժեքությունը, որոնք դուրս են EN ISO 17994-ի շրջանակներից:
3. Սույն Ձև-ով սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխանող հետազոտության մեթոդի բացակայության դեպքում մշտադիտարկումն իրականացվում է մատչելի լավագույն մեթոդների կիրառմամբ.
 - 1) մանրէաբանական ցուցանիշների հետազոտման մեթոդներն են՝
 - ա. Escherichia coli (E. coli) և կոլիձև մանրէներ՝ (EN ISO 9308-1 կամ EN ISO 9308-2),
 - բ. աղիքային էնտերոկոկներ՝ (EN ISO 7899-2),
 - գ. աճեցվող միկրոօրգանիզմների հաշվարկ ագարային միջավայրում 22°C պայմաններում՝ (EN ISO 6222),
 - դ. կլոստրիդիում պերֆրինգենս (Clostridium perfringens)՝ ներառյալ սպորները՝ (EN ISO 14189),
 - ե. լեգիոնելլա (EN ISO 11731 ստանդարտի Աղյուսակ 4-ում նշված ցուցանիշին համապատասխան,
 - Ռիսկի վրա հիմնված մոնիթորինգի և աճեցման մեթոդները լրացնելու համար կարող են օգտագործվել նաև լրացուցիչ մեթոդներ, ինչպիսիք են ISO/TS 12869-ը, արագ աճեցման մեթոդները, աճեցման վրա չհիմնված մեթոդները և մոլեկուլային-գենետիկական մեթոդները, մասնավորապես՝ պոլիմերազային շղթայական ռեակցիայի մեթոդը (ՊՇՌ):
 - գ. սոմատիկ կոլիֆազեր,
 - 2) գործառնական մոնիթորինգի համար կարող են օգտագործվել Ձև 3-ը, EN ISO 10705-2 և EN ISO 10705-3 ստանդարտները:

Պաշտոնական հրապարակման օրը՝ 21 նոյեմբերի 2023 թվական: